***Հաստատված է՝***
***Տնօրինության 23.04.2026թ.-ի նիստի***
***Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:***
***Ուժի մեջ է մտնում 23.04.2026թ.-ից:***

*Եթե Դուք տեղեկատվական ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքէջում, խնդրում ենք ուշադրություն դարձնել վերջինիս գործողության ամսաթվին: Տպագիր տեղեկատվական ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել: Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք տպագիր տարբերակով, ապա մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք www.fastbank.am հասցեով, դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ (+374 10) 510 000 հեռախոսահամարով:*

| ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ*<br>KFW - ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՎԱՐԿ/ԼԻԶԻՆԳ | |
|---|---|
| **Վարկառու/լիզինգառու*** ** | ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ**, անհատ ձեռնարկատեր |
| **Վարկի/լիզինգի նպատակ** | Էներգաարդյունավետ (ԷԱ) նախագծերի իրականացում**** |
| **Վարկի/լիզինգի տեսակ** | Վարկ (չվերականգնվող վարկային գիծ)/լիզինգ |
| **Վարկի/լիզինգի արժույթ** | ՀՀ դրամ |
| **Վարկի/լիզինգի գումար** | Նվազագույն գումար՝ 2 000 000 ՀՀ դրամ<br>Առավելագույն գումար՝ 500 000 000 ՀՀ դրամ*****<br><br>• *Սկսնակ բիզնեսին կարող է տրամադրվել վարկ/լիզինգ մինչև 5 000 000 ՀՀ դրամ գումարի չափով:*<br>• *Բիզնեսը համարվում է սկսնակ, երբ պոտենցիալ վարկառուն/լիզինգառուն նախորդող 6 (վեց) ամիսների ընթացքում չի ունեցել գործող որևէ բիզնես:* |
| **Վարկի/լիզինգի տարեկան անվանական տոկոսադրույք****** | 10.75% |
| **Տարեկան փաստացի տոկոսադրույք** | **11.32-17.58%** |

*Հաստատված է՝*
*Տնօրինության 23.04.2026թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 23.04.2026թ.-ից:*

| | |
|---|---|
| **Տարեկան անվանական տոկոսադրույքի փոփոխության պայմաններ** | • *Վարկառուի/լիզինգառուի կողմից վարկային միջոցները ոչ նպատակային օգտագործելու, նախագծից էական շեղումներ թույլ տալու, Ծրագրի կողմից սահմանված պայմանները չպահպանելու, ինչպես նաև ԳՀՀ բնապահպանական և սոցիալական պահանջները (Հավելված 1) չապահովելու դեպքում Բանկն իրավունք ունի միակողմանիորեն բարձրացնել վարկի/լիզինգի տոկոսադրույքը կամ պահանջել վարկի/լիզինգի ամբողջական կամ մասնակի վաղաժամկետ մարում:*<br>• *ԳՀՀ կողմից վարկը/լիզինգը չորակավորելու կամ տրամադրված վարկի/լիզինգի որակավորումը դադարեցնելու դեպքում վարկը/լիզինգը համարվում է տրամադրված Բանկի սեփական ռեսուրսներով, որից հետո վարկը շարունակում է գործել Բանկում տվյալ պահին Բանկի սեփական ռեսուրսներով «Առևտրային վարկեր» վարկատեսակի շրջանակներում տրամադրվող վարկի, իսկ լիզինգը՝ «Ներքին ռեսուրսներով լիզինգ» լիզինգի տեսակի շրջանակներում տրամադրվող լիզինգի պայմանագրային ժամկետին համապատասխան գործող փարեկան տոկոսադրույքով:* |
| **Վարկային գծի չօգտագործված մասի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք** | **0.5%** |
| **Վարկի/լիզինգի ժամկետ** | **12-60 ամիս** |
| **Մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ** | **0-12 ամիս** |
| **Լիզինգի կանխավճար կամ գրավադրվող ավանդի գումար** | **Նվազագույնը 15%** |

*Հաստատված է՝*
*Տնօրինության 23.04.2026թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 23.04.2026թ.-ից:*

| | |
|---|---|
| **Այլ պայմաններ** | • Վարկերը/լիզինգները տրամադրվում են առնվազն նախորդող 6 ամիսների բիզնես գործունեության ֆինանսական վերլուծության դրական արդյունքների հիման վրա:<br>• Սկսնակ բիզնեսին վարկերը/լիզինգները կարող են տրամադրվել ապագա կանխիկ հոսքերի վերլուծության հիման վրա:<br>• Վարկավորման/լիզինգով տրամադրման ենթակա չեն այնպիսի տրանսպորտային միջոցների ձեռքբերումը, որոնց օգտագործումը վարկառուի/լիզինգառուի տնտեսական գործունեության հետ ուղղակիորեն կապված չէ (օրինակ՝ ներկայացուցչական մեքենաներ):<br>• Ձեռքբերումների գծով հարկերի, այլ պետական վճարների և մաքսային տուրքերի վճարման նպատակով առանձնացված վարկեր/լիզինգներ չեն տրամադրվում:<br>• Վարկային միջոցներով կատարված ծախսերի 100%-ը պետք է լինի փաստաթղթավորված:<br>• Վարկերի/լիզինգների հաստատման նախապայման է հանդիսանում Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության հիմնադրամի (R2E2) կողմից նախագծի գծով էներգաաուդիտի իրականացումը, բացառությամբ մինչև 150 000 000 ՀՀ դրամ գումարի այն նախագծերի, որոնք ընդգրկված են Ստանդարտ կանաչ ներդրումների ցանկում (Positive List) ***(Հավելված 2)*** և որոնք իրականացվում են Բանկի կողմից: |
| **Վարկառուի/լիզինգառուի նկատմամբ պահանջներ** | Վարկային պատմություն.<br>• Վերջին 12 ամիսների ընթացքում դասակարգման բացակայություն և/կամ ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:<br>• Գործող ժամկետանց պարտավորությունների բացակայություն:<br><br>Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վարկառուի/լիզինգառուի տարիքը՝ 18-65 տարեկան: |

*Հաստատված է՝*
*Տնօրինության 23.04.2026թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 23.04.2026թ.-ից:*

| | |
|---|---|
| **Մարման եղանակ** | • Անուիտետային (մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում): <br>• Դիֆերենցված (մայր գումարի ամենամսյա հավասարաչափ և տոկոսագումարի ամենամսյա վճարում): <br>• Անհատական վճարումների ժամանակացույց՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից: <br><br>Մարման եղանակը՝ ըստ հաճախորդի ընտրության: |
| **ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ, ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ** | |
| **Վարկի/լիզինգի հայտի ուսումնասիրության վճար** | Կիրառվում է R2E2-ի կողմից էներգաաուդիտի իրականացման դեպքում՝ <br><br>• 165 000 ՀՀ դրամ (էներգաաուդիտը 1 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնելու դեպքում), <br>• 330 000 ՀՀ դրամ (էներգաաուդիտը 2 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնելու դեպքում), <br>• 495 000 ՀՀ դրամ (էներգաաուդիտը 3 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնելու դեպքում): <br><br>Գանձումը կատարվում է Վարկային կոմիտեի հաստատումից հետո: <br><br>• *Վարկերի/լիզինգների փոխսադրույքները ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման նպատակային ծրագրերը հաստատելու մասին» N 355-Լ որոշմամբ հաստատված «Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի» (Հավելված 1), ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի» շրջանակներում սուբսիդավորվելու դեպքում Հաճախորդից վարկի/լիզինգի հայտի ուսումնասիրության վճար չի գանձվում:* |
| **Վարկի/լիզինգի տրամադրման և սպասարկման վճար** | Չի սահմանվում |
| **Ժամկետանց մայր գումարի տույժ** | 0.1% օրական |

*Հաստատված է՝*
*Տնօրինության 23.04.2026թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 23.04.2026թ.-ից:*

| | |
|---|---|
| **Ժամկետանց տոկոսի տույժ** | 0.13% օրական |
| **Վարկի/լիզինգի վաղաժամկետ մարման տույժ** | Վարկի/լիզինգի վաղաժամկետ մարման դեպքում կիրառվում է տույժ՝ վաղաժամկետ մարվող գումարի 5%-ի չափով:<br>• Կիրառելի է 5 000 001 ՀՀ դրամ և ավելի պայմանագրային գումարով վարկերի/լիզինգների դեպքում:<br><br>*Վարկերի/լիզինգների փոխոսադրույքները ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման նպատակային ծրագրերը հաստատելու մասին» N 355-Լ որոշմամբ հաստատված «Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի» (Հավելված 1), ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի» շրջանակներում սուբսիդավորվելու դեպքում վաղաժամկետ մարման տույժ չի կիրառվում:* |
| **ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ** | |
| **Ապահովման միջոց** | 1. Անշարժ գույք և/կամ<br>2. Երաշխավորություն/ներ<br>• Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների դեպքում բիզնեսի հիմնադիրների և իրական շահառուների անձնական երաշխավորություններ,<br>• Անհատ ձեռնարկատերերի դեպքում իրական շահառուն երրորդ անձ հանդիսանալու դեպքում՝ իրական շահառուի երաշխավորություն:<br>3. Շարժական գույք<br><br>Վարկային Կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ<br>Ավտոտրանսպորտային միջոցի գրավի դեպքում արտադրության ժամկետը չի կարող գերազանցել՝<br>• ռուսական արտադրության ավտոմեքենաների համար՝ 5 տարի,<br>• այլ երկրների արտարդրության ավտոմեքենաների համար՝ 10 տարի: |

FB_Internal

*Հաստատված է՝*
*Տնօրինության 23.04.2026թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 23.04.2026թ.-ից:*

| | |
|---|---|
| **Վարկ/Գրավ առավելագույն արժեք** | Համաձայն Հավելված 3-ի |
| **Ապահովագրություն** | Ավտոտրանսպորտային միջոցները ենթակա են պարտադիր «Կասկո» (ֆիզիկական վնաս և առևանգում) ապահովագրության՝ հօգուտ Բանկի, առնվազն վարկի/լիզինգի գումարի չափով և վարկի/լիզինգի գործողության ամբողջ ընթացքում յուրաքանչյուր տարի ապահովագրական պայմանագրի վերակնքման պայմանով:<br>• Ապահովագրությունը իրականացվում է հաճախորդի կողմից:<br>• ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության» ծրագրի շրջանակներում տրամադրվող լիզինգների դեպքում լիզինգի առարկայի ապահովագրությունն իրականացվում է Լիզինգատուի կողմից՝ վերջինիս հաշվին: |
| **Գրավի գնահատում** | Գրավը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության և/կամ Բանկի աշխատակցի կողմից՝ կախված վարկի/լիզինգի գումարի չափից:<br>• Բանկի աշխատակցի կողմից գնահատումն իրականացվում է անվճար: |
| **Երաշխավորների նկատմամբ պահանջներ (առկայության դեպքում)** | Ֆիզիկական անձ (18-65 տարեկան), ով.<br>• չունի գործող ժամկետանց վարկային պարտավորություններ.<br>• վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:<br><br>Երաշխավորներից առնվազն մեկը պետք է հանդիսանա անշարժ գույքի սեփականատեր կամ ապահոված լինի գրանցված աշխատավարձով: |
| **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ** | |

*Հաստատված է՝*
*Տնօրինության 23.04.2026թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 23.04.2026թ.-ից:*

| | |
|---|---|
| **Վարկի/լիզինգի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման ժամկետ** | Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային/լիզինգի հայտի վերաբերյալ որոշման կայացում մինչև 7 աշխատանքային օրվա ընթացքում: |
| **Որոշման մասին տեղեկացման ժամկետ** | Որոշման կայացումից հետո մինչև 1 աշխատանքային օր: |
| **Վարկի/լիզինգի տրամադրման ժամկետ** | Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց և գրավի իրավունքի պետական գրանցումը իրականացնելուց հետո՝ մինչև 1 աշխատանքային օր: |
| **Որոշման վավերականության** | **30 աշխատանքային օր**<br>Ընդ որում, Բանկը իրավասու է մերժել վարկի/լիզինգի տրամադրումը, եթե փոփոխվել են վարկի/լիզինգի տրամադրման դրական որոշում կայացնելու համար էական համարվող պայմաններից որևէ մեկը: |

* *Սույն վարկատեսակով նախատեսված վարկերը/լիզինգները տրամադրվում են ««Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ» հիմնարկի (ԳՀՀ) կողմից իրականացվող և Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW բանկի կողմից ֆինանսավորվող «Վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության խթանում. փուլ 4» վարկային ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ Ծրագիր)*

** *Իրավաբանական անձանց մասնակիցների (բաժնետերերի) առնվազն 50%-ը պետք է հանդիսանան ՀՀ ռեզիդենտ մասնավոր սեփականատերեր*

*** *Վարկառու/լիզինգառու պետք է բավարարի միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների չափանիշներին: Ձեռնարկությունը համարվում է միկրո, փոքր կամ միջին, եթե այն համապատասխանում է Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC) ՄՓՄՁ սահմանման ներքոնշյալ երեք չափանիշներից (աշխատակիցներ, ակտիվներ և վաճառք) երկուսին (դիմում-հայտի ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի հաշվարկով).*

| **ՄՓՄՁ չափանիշ / ՄՓՄՁ տեսակ** | **Աշխատողների քանակ** | **Ակտիվների ծավալ (համարժեք ՀՀ դրամ)** | **Հասույթի ծավալ (համարժեք ՀՀ դրամ)** |
|---|---|---|---|
| Միկրո ձեռնարկություն | < 10 | <100 000 ԱՄՆ դոլար | <100 000 ԱՄՆ դոլար |
| Փոքր ձեռնարկություն | 10-49 | 100 001-3 000 000 ԱՄՆ դոլար | 100 001-3 000 000 ԱՄՆ դոլար |
| Միջին ձեռնարկություն | 50-300 | 3 000 001-15 000 000 ԱՄՆ դոլար | 3 000 001-15 000 000 ԱՄՆ դոլար |

*Հաստատված է՝*
*Տնօրինության 23.04.2026թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 23.04.2026թ.-ից:*

**** Էներգաարդյունավետ (ԷԱ) նախագծեր են համարվում՝

1. կապիտալ ներդրումները, որոնք համապատասխանում են էներգախնայողության միջոցառումներին,
2. այնպիսի ապրանքների ձեռքբերումը, որոնք համապատասխանում են էներգախնայողության միջոցառումներին և Հաճախորդի համար համարվում են շրջանառու միջոցներ: Շրջանառու միջոցների ձեռքբերումը համարվում է ընդունելի, եթե՝
   - դրանք ձեռք են բերվել կանաչ ապրանք արտադրելու նպատակով, որոնք հետագայում կվաճառվեն որպես էներգաարդյունավետ ներդրում,
   - շրջանառու միջոց ձեռք բերող ընկերությունը պլանավորում է վերավաճառել դրանք իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր վերջնական սպառողների՝ որպես էներգաարդյունավետ ներդրում:

*Օրինակ՝ եթե Հաճախորդը զբաղվում է էներգախնայող լամպերի, ջրապաքացուցիչների կամ այլ նմանատիպ ապրանքների վաճառքով, այդ ապրանքների ձեռքբերումը կարող է վերաֆինանսավորվել Ծրագրի շրջանակում՝ հետագա վաճառքի նպատակով:*

- *Ծրագրի շրջանակներում կարող են վարկավորվել նաև էներգախնայողության միջոցառումներին չհամապատասխանող շրջանառու միջոցների ձեռքբերումը, եթե վարկի առնվազն 70%-ը ուղղվում է այն հիմնական միջոցների ձեռքբերմանը, որոնք համապատասխանում են էներգախնայողության միջոցառումներին, և ձեռք բերված շրջանառու միջոցները ուղղակիորեն կապված են էներգաարդյունավետ ներդրման հետ (օրինակ, եթե Հաճախորդը ցանկանում է ներդրում կատարել թխվածքների արտադրության սարքավորումների մեջ՝ 7 միլիոն դրամի չափով, ապա 10 միլիոն դրամի վարկի դեպքում մնացած 3 միլիոնը կարող է օգտագործվել հումք հանդիսացող ալյուրի ձեռքբերման համար)*

***** Բացառիկ դեպքերում, եթե վարկը/լիզինգը նախատեսված է այնպիսի ներդրումների համար, որոնք ԳՀՀ կողմից կգնահատվեն որպես ՀՀ տնտեսության վրա էական դրական ազդեցություն ունեցող ներդրումներ (աշխատատեղերի էական քանակի ստեղծում, արտահանում խթանող, ենթակառուցվածքների ստեղծում, նորարարական լուծումներ, բիզնեսում էական ծավալներով վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառում և այլն), ապա վարկի/լիզինգի գումարը կարող է հասնել մինչև 1,000,000,000 ՀՀ դրամի:

****** Տրամադրվող վարկերի/լիզինգների տոկոսադրույքները ենթակա են սուբսիդավորման ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման նպատակային ծրագրերը հաստատելու մասին» N 355-Լ որոշմամբ հաստատված «Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի» (Հավելված 1), ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի» շրջանակներում՝ վերջիններիս պայմանների բավարարման դեպքում (պայմանների փոփոխության դեպքում գործում են ՀՀ կառավարության որոշման տվյալ պահին գործող

*Հաստատված է՝*
*Տնօրինության 23.04.2026թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 23.04.2026թ.-ից:*

պայմանները): Նշված ծրագրերի շրջանակներում վարկի/լիզինգի առարկա կարող են հանդիսանալ *նոր (չօգտագործված) մեքենասարքավորումները և դրանց բաղկացուցիչ մասերը*՝ սուբսիդավորման հետևյալ պայմաններով.

***ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման նպատակային ծրագրերը հաստատելու մասին» N 355-Լ որոշմամբ հաստատված «Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի» (Հավելված 1) շրջանակներում.***

1. սուբսիդավորվող առավելագույն ժամկետ՝ 42 ամիս,
2. մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ՝ 6 ամիս,
3. վարկային միջոցների օգտագործումը՝ միայն անկանխիկ և բանկային փոխանցումներով,
4. լիզինգի դեպքում ձեռքբերումների գծով մատակարարներին կատարվող վճարումները՝ միայն անկանխիկ և բանկային փոխանցումներով,
5. տոկոսադրույքի սուբսիդավորման չափը՝
    - վարկի դեպքում՝ 6 տոկոսային կետ
    - լիզինգի դեպքում՝ 8 տոկոսային կետ
6. գործունեության ոլորտներ՝
    - C (ՍԻ)՝ «Մշակող արդյունաբերություն»,
    - B (ԲԻ)՝ «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում»,
    - D(ԴԻ)՝ «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում»,
    - J (ՋԵՅ)՝ «Տեղեկատվություն և կապ»,
    - F (ԷՖ)՝ «Շինարարություն»,
    - G45.2(ՋԻ)՝ «Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում»,
    - H (ԷՅՋ)՝ «Փոխադրում և պահեստային տնտեսություն»,
    - I 55 (ԱՅ)՝ «Կացության կազմակերպում» (բացառությամբ Երևան քաղաքի վարչական սահմաններում կացության կազմակերպման գործունեություն իրականացնող տնտեսավարողների,
    - M (ԷՄ)՝ «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն»,
    - N77 (ԷՆ)՝ «Վարձույթ և լիզինգ»,
    - P (ՓԻ)՝ «Կրթություն»,
    - Q (ՔՅՈՒ)՝ «Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում»,
    - R (ԱՌ) 90՝ «Ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն:

*Հաստատված է՝*
*Տնօրինության 23.04.2026թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 23.04.2026թ.-ից:*

***ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի» շրջանակներում.***

1. սուբսիդավորվող առավելագույն ժամկետ՝ 60 ամիս,
2. մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ՝ լիզինգը տրամադրելու պահից առավելագույնը 3 ամիս: Լիզինգառուի դիմումով Բանկի կողմից կարող են սահմանվել լիզինգի հիմնական գումարի վճարման համար դադարի շրջաններ՝ տարեկան մինչև 6 ամիս ժամկետով: Ընդ որում, լիզինգի ողջ ժամկետի ընթացքում մայր գումարի մարման արտոնյալ ժամկետների հանրագումարը չի կարող գերազանցել 12 ամիսը,
3. ձեռքբերումների գծով մատակարարներին կատարվող վճարումները՝ միայն անկանխիկ և բանկային փոխանցումներով,
4. տոկոսադրույքի սուբսիդավորման չափը՝ 10 տոկոսային կետ (ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար՝ 10.75 տոկոսային կետ):

*Այն դեպքում, երբ վարկային միջոցներով ձեռք բերվող նոր (չօգտագործված) մեքենասարքավորումները և դրանց բաղկացուցիչ մասերը ենթակա են սուբսիդավորման ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման նպատակային ծրագրերը հաստատելու մասին» N 355-Լ որոշմամբ հաստատված «Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի», ինչպես նաև 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի» շրջանակներում և հանդիսանում են վարկային միջոցներով կատարվող խառը ներդրումների մի մասը, ապա ընդհանուր նախագծի վարկավորումը կատարվում է փուլային եղանակով՝ սուբսիդավորվող մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերման մասով կնքելով առանձին վարկային պայմանագիր:*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունները և դրանց վճարներ.
   1.1. Անշարժ գույքի՝ այդ թվում հողամասի, գրավադրման դեպքում՝
      1) Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10 000 ՀՀ դրամ,
      2) Գրավի պետական գրանցման վճար՝ 26 000 ՀՀ դրամ,
      3) Նոտարական վավերացման վճար՝ 16 000-20 000 ՀՀ դրամ:
      4) Գույքի գնահատման վճար՝ 15 000-25 000 ՀՀ դրամ:
   1.2. Ավտոմեքենայի գրավադրման դեպքում՝

*Հաստատված է՝*
*Տնօրինության 23.04.2026թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 23.04.2026թ.-ից:*

1) Ավտոտրանսպորտային միջոցի սահմանափակումների մասին տեղեկանք՝ 3 000-4 000 ՀՀ դրամ,
2) Գրավի պետական գրանցման վճար՝ 2 000-3 000 ՀՀ դրամ,
3) Գրավի ապահովագրություն՝ վարկի գումարի 2.5%-ի չափով,
4) Նոտարական վավերացման վճար՝ 11 000-12 000 ՀՀ դրամ,
5) Գույքի գնահատման վճար՝ սկսած 5 000-20 000 ՀՀ դրամ:

1.3. R2E2-ին կատարվող էներգաաուդիտի իրականացման վճար՝
1) 165 000 ՀՀ դրամ (էներգաաուդիտը 1 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնելու դեպքում),
2) 330 000 ՀՀ դրամ (էներգաաուդիտը 2 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնելու դեպքում),
3) 495 000 ՀՀ դրամ (էներգաաուդիտը 3 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնելու դեպքում):

2. Նախքան պայմանագրի կնքումը Բանկը Վարկառուին/Լիզինգառուին և Երաշխավորին կտրամադրի վարկի/լիզինգի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են Վարկառուին/Լիզինգառուին տրամադրվելիք վարկի/լիզինգի էական պայմանները:

3. Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:

4. Վարկի/լիզինգի տոկոսները հաշվարկվում են վարկի/լիզինգի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 1/365 հարաբերակցությամբ, իսկ նահանջ տարվա համար 1/366 օրվա հաշվարկից օրվա հաշվարկից:

5. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև Կազմակերպության հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների և անկախ գնահատողների ցանկը սահմանվում են առանձին՝ «Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ» և «Անկախ գնահատողներ ցանկ» Հավելվածներով:

*6. Վարկը/լիզինգը տրամադրվում է Բանկի Գլխամասային գրասենյակում, «Հին Նորք», «Շրջանային», «Ավան», «Դավթաշեն», «Մովսես Խորենացի», «Սեբաստիա», «Կոմիտաս», «Բաղրամյան» , «Թումանյան», «Էրեբունի», «Հարավ-Արևմտյան», «Շենգավիթ», «Ալեք Մանուկյան», «Տիգրան Մեծ», «Արմավիր», «Արտաշատ», «Մասիս», «Գորիս», «Գյումրի», «Վանաձոր», «Աբովյան», «Հրազդան», «Էջմիածին», «Մարտունի», «Սևան», «Գավառ», «Անի», «Աշտարակ», «Իջևան», «Վեդի», «Արթիկ», «Եղեգնաձոր», «Կապան», «Չարենցավան», «Ալավերդի» «Քաջարան», «Նոր Նորք» և «Սիսիան» մասնաճյուղերում:*

7. Վարկի/լիզինգի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.
7.1. Վարկառուի/լիզինգառուի, Երաշխավորի և Գրավի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

8. Վարկի/լիզինգի մերժման գործոններն են.
8.1. Վարկառուի/Լիզինգառուի և/կամ Գրավի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

*Հաստատված է՝*
*Տնօրինության 23.04.2026թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 23.04.2026թ.-ից:*

9. Վարկի/լիզինգի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար, որպես կանոն, Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին վարկային/լիզինգի պայմանագրով սահմանված վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, վարկի/լիզինգի գումարի մարմանը: Բանկը իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

10. Ոչ ֆինանսական ծառայությունների սակագները, այդ թվում քաղվածքների, պայմանագրերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ https://www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Բանկի մասնաճյուղերում:

11. Երաշխավորն իրավունք ունի.

11.1. Ցանկացած ժամանակ Վարկատուից/Լիզինգատուից պահանջել տեղեկատվություն վարկի/լիզինգի մնացորդի չափի մասին:

11.2. Վարկառուից/Լիզինգառուից հետ ստանալու իր կողմից վարկի/լիզինգի համար վճարած գումարները, ինչպես նաև Վարկառուի/Լիզինգառուի փոխարեն կրած այլ վնասները:

11.3. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն Բանկում գործող Ոչ ֆինանսական ծառայությունների սակագների՝ https://www.fastbank.am:

**12. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ/ԼԻԶԻՆԳԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ/ԼԻԶԻՆԳԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ՝ www.fastbank.am:**

**13. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ/ԼԻԶԻՆԳԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ՝ ՎԱՐԿԻ/ԼԻԶԻՆԳԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍՆԵՐԸ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ), ԻՍԿ ՏՈՒՅԺԵՐԸ/ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՎԱՐԿԻ/ԼԻԶԻՆԳԻ ՄԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ/ԿԱՄ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ/ԼԻԶԻՆԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՑՎԱԾ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐՔԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ, ԳՐԱՎԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԻՄԱՑ 3-ՐԴ ԱՆՁԱՆՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ:**

**14. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ/ԼԻԶԻՆԳԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:**

*Հաստատված է՝*
*Տնօրինության 23.04.2026թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 23.04.2026թ.-ից:*

15. ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ/ԼԻԶԻՆԳԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ/ԼԻԶԻՆԳԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:
16. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ ԵՎ ԿԲ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ/ԼԻԶԻՆԳ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:
17. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՈՐՈՆՑ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋՈՒՄ՝ www.fastbank.am: ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ, ՈՐԸ ՉՊԵՏՔ Է ԳԵՐԱԶԱՆՑԻ ՄԵԿ ԱՄԻՍԸ, ՎԱՐԿԱՌՈՒԻՆ/ԼԻԶԻՆԳԱՌՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՍՊԱՌՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ:
18. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՁԵԶ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՆ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ՝ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԿԱՊԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ:
19. ՎԱՐԿԱՅԻՆ/ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ/ԼԻԶԻՆԳԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՎԵՐՋԻՆՍ ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ:
20. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: